


ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Կ. Պոլսոյ հմր. 8 ՄՂՃ.
Գաւառացի 10 ՄՂՃ.
Վեցամսեայ Կ. Պոլսոյ 4 ՄՂՃ.
Գաւառացի 5 ՄՂՃ.
Ամսական մէկ 20 նոյ թղթադրամի
Շահուցման տարբ. մէկ անգամի հա-
մար 3 դուրուշ, երկու անգամի հա-
մար 2 դուրուշ, երեք անգամի հա-
մար դաս սակարկութիւն կըլ-
լայ :



ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 12 ՄԱՅԻՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ռուսիա իւր փափաքին հասաւ : Այսպիսի ժամանակէն ի վեր իւր ցա-
նած սերմանեաց արգասիքը կը վա-
յելէ, և այն պատերազմը՝ զոր չե-
րէնչեց բանալ յանուն մարդկութեան,
յանուն քրիստոնէից վիճակին բարե-
լաւութեան, ահաւասիկ իւր բոլոր
սաստիկութեամբ կը ճարտի : Բարե-
նորոգում, բարոյքում, խիստ գե-
ղեցիկ բառեր են, և քաղցը կը հնչեն
ականջի, բայց պէտք է որ ասոնք
Ռուսիոյ մէջ ալ գործադրուէին :
Պէտք է որ իբրեւ դրացի՝ մարդա-
սիրական օրինակներ տեսնէինք Ռու-
սիոյ մէջ, և ոչ թէ ազատականաց,
ազգային ինքնօրինութիւն պահան-
ջողաց, կառավարութեան բռնու-
թիւններուն դէմբողոքողաց և իրենց
հայրենի կրօնքին հաւատարիմ միա-
ցորդներու սպանմանց, աքսորմանց,
և ուրիշ պատիժներու տխուր տեսա-
րան մը : Սիպերիա ահաւասիկ անուն
միեղած է, զոր սոսկմամբ կը լսեն
մեր ականջները, հոն կանայք իսկ
յարստը երթալէ ազատ չեն, և դու-
ցէ այս վայրկեան հազարներով կը
հաւաքեն, հեռի ի սիրելեաց և ի
հայրենեաց : Բայց և այնպէս Ռուսիա
քրիստոնէութեան պաշտպան կանգ-
նել, ազատութեան և անկախութեան
ախոյրան ձեւանալ, արգարութեան
և իրաւանց նախանձախնդիր լինել
կուզէ : Եւրոպիոյ խաղաղութիւնը,
աշխարհի անդորրութիւնը, միլիոնա-
ւոր մարդոց հանգստութիւնը, կեան-
քը և ամենէն սիրելի բաներն իւր
փառասէր կրնայ խաղաղիկ ըրած է :
Խաղաղութիւնը պատերազմական
պատրաստութեամբ կանցունէ, և
հաշտութիւնն ալ իւր գաղտնի մե-
քենայութեամբ գրեթէ ծպտեալ
պատերազմի կը դարձունէ, ուր միշտ
գրչով կը մարտնչուի, իւր հակառակոր-
դին վրայ ամբաստանութիւններ տե-
ղալով, մինչդեռ իւր գործակատար-
ներն ամեն տեղ մեծ որդալթը կը
պատրաստեն : Քրիստոնէից պաշտ-
պանութիւնը շարունակ կը յեղյեղէ,
և իւր շահասէր քաղաքականութեամբ
քնաւ չխորհիր թէ այս ընթացից միակ
հետեւանքը կրօնական կիրքերը գը-
գըռել, հին զայրոյթ և ատելու-
թիւնները նորոգել և անդամանելի
հարուած մը տալ է ներդաշնակ
սկզբանց, վիճ մը բանալ է երկու
մեծ կրօնից մէջ, որք թէ և միջին
դարուց մէջ իրարու սիրելի թշնամի
էին, և ասոր համար արիւնքուն զո-
ւարթները ըրած էին, բայց պատ-
մութիւնը պէտք էր բաւական խրատ
ըլլար երկուքին ալ, և անօգուտ ա-
րիւնքեցութեանց վնասն անոնց հաս-
կըցներ : Ի՞նչ եղաւ այնպիսի պատե-

րազմաց արդիւնքը զորս քրիստոնեայ
և մահմետական աշխարհներն ստեղ-
մեցած էին : Արիւնքեցութեան արիւն-
հեղութիւն ծնած և ատելութեան
ալ ատելութիւն բղթած էր, և ասոր
աղէտներն երկու կողմին ալ հասան :
Բարեբաղդաբար Եւրոպա քաղա-
քակրթութեան սկզբանց զորաւոր
շունչով և նիւթական բարեկեցու-
թեան ու շահուց ազդեցութեամբ ըս-
թափեցաւ, սխալմունքը ճանչեց, կը-
րօնական պատերազմաց վերջ տուաւ,
և այն օրէն ի վեր յաւաքելութեան
չաւրին մէջ մեծ քայլեր առաւ : ար-
ւեստները, վաճառականութիւնը, նիւ-
թական բարեկեցութիւնը զարգացան
Եւրոպիոյ մէջ : Բայց իսլամ աշխարհը
տակաւին այս ընդհանուր շարժման
մասնակից եղած չէր, երբ Ռուսիա
իւր առաջին յարձակումներն ըրաւ
Թուրքիոյ վրայ, զորս գրեթէ քիչ տա-
րիներ միջոց տալով նորոգեց : Այս
պատճառ եղաւ Արեւելից յետադիմու-
թեան քանդի երկիր մը՝ որ շարուն-
անկ պատերազմի սպառնալեաց ներ-
քե է, որուն էութեան անկախու-
թեան և ամբողջութեան դէմ ստեղ-
մեցողներ կը յարուցուի, ժամանակ
և միջոց չկրնար ունենալ իւր ներքին
կազմակերպութեան ու բարենորոգ-
ման զբաղելու : Այս մերթ գաղտնի
և մերթ յայտնի թշնամական վիճակը
Ռուսիոյ ալ ոչինչ նուազ վնասակար
եղաւ, բայց իւր աւանդական քաղա-
քականութիւնը միայն նպատակ ու-
նենալով իւր առջև, ամեն բան անոր
կը զոհէ : Թող միլիոնաւոր մարդիկ
աղքատութեան, տղիւտութեան, կու-
րութեան մէջ մնան, բայց աւանդա-
կան քաղաքականութիւնն առաջ եր-
թայ :

Ռուսիոյ աշխարհակուլ քաղաքա-
կանութեան պատճառաւ է որ ի ներ-
քեւստ յաւաքելութիւնը գլխաւո-
րապէս զինուորականութեան վերա-
պահուած է, զինուորականութիւնը
մեծ ազդ մ'իւր ճիւղներուն մէջ կը
խեղդէ : Խեղճ Ռուս գիւղացին իւր
գաւաղը միշտ զինուորականութեան
նուիրելու պարտաւորեալ է, որպէս
զի կեդրոնական Ասիոյ խորերն ար-
շաւանքներ ընելով անապատներուն
մէջ ծարաւ և նօթութենէ մեռնի,
կամ Գանձուրի կողմը բիւրաւորներով
ի մահ կը դիմէ : Չինուորականու-
թիւնն ու պատերազմը Ռուսիոյ հա-
մար ալ մեծ պատուհաս մ'են, յոր-
մէ հայրենասէրը ազատելու կը փա-
փաքին, բայց բռնութիւնը զանոնք
լուրթեան կը դատապարտէ : Կառա-
վարական թերթ մը, Կոյս, խոնարհ
ազգարարութիւն մը կընէր թէ ներ-
քին թշնամեաց դէմ ալ պէտք է մար-
տնչել, այն թշնամեաց՝ որք երկրին
եկամուտներն իրենց որս և աւար ը-
րած են : Թէ Ռուսիա Գըրմի պատե-
րազմին ժամանակ Գաղղիացիներէն
ու Անգլիացիներէն չարգելեցաւ,

այլ այն զեղծ պաշտօնատարներէն՝
որք զօրաց պէտքը լինելու սահման-
եալ ստակներով հարստացած էին :
Թէ պէտք է ասանց և ոտակահալութեան
վրայ համարաւորութիւն մը գտնել ազ-
գային խորհրդարանի մը միջոցաւ :
Խորհրդարան ինդիւլու համար նոյն
իսկ Ռուսը ալ արթնցած են, բայց
վերոյիշեալ յօդուածն հրատարակող
թերթն երկու ամիս գաղաւթման գա-
տապարտեցաւ կառավարութեան հը-
րամանաւ : Հատարակաց կարծիքն այս
վայրկեանիս խեղդումն է բոլոր Ռու-
սիոյ մէջ, մինչդեռ այն թուրքիան
զոր Ռուսիա բարեկարգելու կընէ, ա-
զատ խորհրդարան մ'ունի, ուր Ժո-
ղովրդեան իրաւունքն ամենայն հա-
մարձակութեամբ կը պաշտպանուի :

Օսմանեան խորհրդարանին վրայ
կասկածներ յարուցանողներ եղան,
և Ռուսիոյ կառավարութիւնն առա-
ջին եղաւ լսելու թէ Օսմանեան խոր-
հրդարանը մեռնչեալ ժողով մը պի-
տի ըլլայ՝ կառավարութեան հրամա-
նագրերն արձանագրելու համար :
Բայց Օսմանեան բեմին արձագանգ-
ները շուտով հերքեցին Ռուսիոյ այս
ամբաստանութիւնը : Հոն բարձրաւ-
տիճան անձինք իսկ չինուորացան՝
երբ անոնց վրայ գլխաւորութիւններ
ընել հարկ եղաւ : Հոն այս վայրկեանիս
Թուրքիոյ ելումուխ հաշուեցոյցը խիստ
քննութեան մ'ենթարկուած է, և
ներկայ պատերազմական վիճակին հա-
կաւակ՝ Օսմանեան խորհրդարանը
գովելի փութով մի տա մի աչքէ կան-
ցունէ պետութեան եղն ու մուտքը,
ամենայն ազատութեամբ գիտողու-
թիւններ ու բարեփոխութիւններ կը-
նէ, պէտք եղած ժամանակ պար-
տաւ ալ չըլլանար որու որ անի է :
Վերջապէս այս նորահաստատ մար-
մինն առողջ և մնայուն կազմութեան
մ'ամեն նշանները կը ցուցնէ : Կըս-
ւէր թէ քրիստոնեայ երեսփոխանը
չպիտի համարձակին իսլամ երեսփո-
խանայ հետ վիճարկանութեան մըտ-
նել, ազատութեամբ իրենց կարծիքն
յայտնել և պաշտպանել, սակայն ա-
մենէն աւելի սկզբապիւններ իսկ երբ
Օսմանեան խորհրդարանին նիստերուն
ներկայ կը գտնուին կամ վիճաբա-
նութիւնները լրացուց մէջ կը կար-
գան, կրնան թէ կամաւոր կողեր
չեն՝ տեսնել թէ որչափ սխալ էր ի-
րենց ըմբռնումը, Կըսուէր թէ խոր-
հրդարանը միայն Միտհաթ փաշայի
գործն է, և ասոր համար անոր կա-
րեւորութիւնը նուազեցնելու ճիգ կը
թափուէր : Բայց ամիսներէ ի վեր
Միտհաթ փաշա բայցակայ ըլլալով
խորհրդարանը գումարեցաւ և իւր
էութիւնը գործով հաստատեց : Ա-
սով տեսնուեցաւ թէ Միտհաթ փա-
շա կրնար Օսմանեան Սահմանադրու-
թեան եւանդուն և գործունեայ հիմ-
նադիրներէն մին ըլլալ, բայց Սահ-
մանադրութիւնն անոր պաշտօնազա-

րութենէն և մէկ անձի մը կամքէն ու
հաճոյքէն աւելի հաստատուն հիմ-
ունէր : Ահա այս ամեն խորհրդածու-
թիւնները կապացունեն, և իրօք ակն-
յայտնի կը տեսնուի, որ այս վայրկե-
նիս եթէ բարենորոգման կարօտ տե-
րութիւն մը և երկիր մը կայ, այն ալ
Ռուսիա է, ուր տակաւին բացարձակ
դրութիւնն իւր բոլոր չարիքով ներ-
կայ է, թէպէտ և Ռուսիա այլոց բա-
րենորոգում կը քարոզէ :

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Ասիոյ կողմէն եկած վերջին լու-
րերն Արտահանի առումը կը հաստա-
տեն :

Արտահանի բերքը որ 8000ի չափ
պահպան զօրք և 33 թնդ. անօթ ու-
նէր, 30—40000 ուսական զօրաց
յարձակումներուն քանի մ'օր դի-
մադրելէ ետեւ, վերջապէս յարձակ-
մամբ առնուեր է :

Սոյն լուրը պատերազմի պաշտօ-
նատան Հաքիքէթ լրագիրն ալ հաս-
տատելով կաւնցնէ թէ « մեր զօր-
քերը գիւղացիական քաղութեամբ
պաշտպանելին զԱրտահան, բայց
Ռուսաց զօրութիւնը քառասորակ
աւելի ըլլալով տեղի տալու հարկա-
դրեցան :

« Թշնամեայն ըրած կորուստը ճըշ-
դիւ յայտնի չէ, բայց մեր կորուս-
տը 150 մեռեալ և նոյնչափ վիրաւոր
եղած է : Մանրամասն տեղեկութիւնք
գեւա չկան :

« Յաղթութիւնք՝ ինչպէս նաև
ձախողումք՝ պատերազմին բնական
հետեւանքն ըլլալով, կրնէ իրատմբ
Հաքիքէթ, պէտք է յուսանք որ
այս ձախողումին ետեւէն շատ չան-
ցած՝ մեր քաղաքականի զօրաց մէկ
պայծառ յաղթութիւնը կը լսնէր :

Կըսուի թէ Արտահանի առնող
Ռուսական բանակն, որոյ հրամանա-
տարն է Տէր Ղուկասով զօրապետը,
միջեալ բերքաքաղաքին մէջ պէտք
եղածին չափ պահպան զօրք գտնե-
լէ ետեւ կարծի կըլլայ քայլեր է Լորիս
Մէլիքովի բանակին հետ միանալու,
որ արդէն սաստկապէս պատերազ-
մի բռնուած է Օսմանեան զօրաց հետ :

Սթանբուլ լրագրին մէջ կը կար-
գանք թէ Ռուսիոյ զօրաց ընդհանուր
հրամանատար Ահմետ Մուխթար փա-
շան հրաման ինդիւր է՝ պատերազ-
մական տեսնի մ'առջև ի գաւա կու-
չիւր Արտահանի զօրաց հրամանա-
տար Ֆերիք Հիւսէյին փաշան, որ
վախճանեալ Հիւսէյին Ալի փաշա-
յին աներձակն է եղեր :

Կարինէն մայիս 9 թուով Լա թիւր-
քի լրագրին գրուած նամակ մը հե-
տեւեալ լուրերը կուտայ :

« Պայտակա զորքը անհայտ կըլ-
լի գրաւեցաւ Ռուսական զորքերէն
իւրիւրէն մէջ գտնուող սակաւաթիւ
զորքն եւ թաղակցաւ Ռուսաց ա-
ռաւելագոյն զօրութեան առջեւ , և
այսպէս քաղաքն անօգուտ արիւն-
հեղութենէ աւերուից և աւարառու-
թենէ ազատ մնաց :

« Ռուսք Պայտակա մտնելէ ետեւ
տեղւոյն գլխաւոր բնակիչներէն Շէ-
վիչ Էֆէնտի անուն անձ մը քաղա-
քապետ անուանեցին : Յետոյ իրենց
զօրութիւնն երեք բաժնելով , ա-
ռաջինը վանայ , երկրորդը Համե-
րի և Երրորդը Գարա-քիլիսէի վրայ
դրկեցին : Առաջին դուռը ճանաչե-
վրայ նպար և մանուսնը հեծելոց հա-
մար խոտ չգտնելով՝ կանգ առնելու
պարտաւորեցաւ : Երկրորդը կէս նը-
պարակի ունի կարինէն 14 վարսակ
հեռու Տէյլի—Պապա ըստած տեղը
բանակեալ Օսմանեան զօրաց ետեւ
անցնելով Բաթէնի դաշտը մտնել , որ
կարինէն քիչ հեռի է : Բայց չենք
յոշար որ Ռուսք այսչափ յառաջ
բաշտ համարձակին :

« Վրդէն տասնչորս օրէ որ Ար-
տահան պաշարուած է , Հակոսական
զորոյնը կը պարտին այս բերդա-
քաղաքին վրայ , որ Ռուսաց դիմադ-
րելու համար պէտք եղածին չափ
ամրացեալ է կըսուի :

« Կարսի կողմէն եկած լուրերն ալ
հակասական ըլլալով՝ հարկ չեմ հա-
մարիր յիշել : Այս ստոյգ է որ կար-
սէն , Պայտակա և Արտահանէն հա-
զորակցութիւնը կտրուած են կար-
սոյ հետ :

« Կըսուի թէ Ռուսաց զօրքն ընդ-
հանրապէս չափաւորութեամբ կը
վարուին , առած նպարներուն գինը
կանխիկ կը վճարեն :

Դանուրի կողմէն լուր մը չկայ :
Կըսուի թէ օգին վատութիւնն և
ջրոց յորդուածին օրդելը կըլլան
Դանուրի վրայ Ռուսաց յառաջա-
դացութեան , ինչպէս նաև պատե-
րազմական նիւթոյ փոխադրութեան
Բեքրապուրէն եկած հեռագրի մը
խօսքին նայելով , Ալեքսանդր կայսրն
ամսոյ 13/25ին Ռուսական պիտի եր-
թայ : Ըսել է թէ Ռուսական բանակը
կայսրն հոն հասնելէն ետեւ Դանուրն
անցնելու փորձ պիտի ընէ : Կարծիք
կայ թէ Ռուսերը Դանուրի վրայ ընդ-
հանուր յարձակում մը պիտի ընեն ,
որպէս զի դո՛նէ մէկ երկու կողմէ
յաջողին այս կողմն անցնիլ :

Այս առաւօտեան վաղըթ լրա-
դիրը կը ծանուցանէ թէ Ալեքսանի
մէջ 12 վաշտ Օսմանեան զօրք , 25
հաս Բուրս և 67 հաս ալ հասա-
րակ թնդանօթ կային : ասոնց հետ
մէկտեղ ութ ամսուան պաշար կար :
Թշնամին՝ դեռ ճշգիւ չգիտցուիլ
որչափ զօրութեամբ անցեալ իրակի
օրը ժամ եօթինն Արտահանի առա-
ջին ամրութեան վրայ յարձակել է :
Հոն գտնուող Օսմանեան զօրքը սաստ-
կապէս դիմադրելով և կռիւը չա-
րունակելով , մեր կողմէն 150 հազի
նահատակ և նոյնչափ մ'ալ վերաւոր
ինկեր են :

« Երրորդ այսպէս պատերազմը կը
շարունակէր , հրամանատար Հիւսէ-
յին փաշան , դեռ իւր գտնուած դիր-
քին վրայ յարձակաւ մ'չեղած , հետը
գտնուած զօրաց և սպայից հետ ի
փախուստ ածապարել է : Թշնամոյն
գէժ կռուող զօրքն ալ՝ զայս տես-
նելուն պէս՝ ամրութիւնները թող-
լով ի փախուստ դարձեր են , և այս-
պէս Արտահանի ամրութիւնքն և քա-
ղաքը թշնամոյն ձեռքն ինկեր են :
Աւերուիք է ուրեմն ըսել որ Ար-
տահանի առաւմը՝ հրամանատարին

վատութենէն առաջ եկած է : Այս
պատճառաւ Սէֆէտ Մուրթար փա-
շան ալ յիշեալ հրամանատարն իրեւ
մատնիչ պատերազմական տոնի
մ'առջեւ դատել կառաջարկէ :

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Փարիզ 20 մայիս .

Քառսուն գաւառագետք ետ կան-
չուեցան , պաշտօնէ հանուեցան կամ
հրաժարական տուին : Քանուերկու գա-
ւառագետք ալ մէկ գաւառէն միւսը զըր-
կուեցան :

Բազմաթիւ հին գաւառագետք վերա-
հաստատեցան :

Մատրիա 21 մայիս .

Սպանիոյ լրագիրը կը խնդրեն Գաղ-
ղիայէն որ Տոն Գարրոն վաճառէ իրեւ
դադլիական հիւրընկալութիւնը չարաչար
զօրծածող և զՍպանիա վրդովող :

Վալենսիէն 21 մայիս .

Ռուսիոյ գործակառարը պաշտօնապէս
ծանոյց Միացեալ Նահանգաց կառավա-
րութեան թէ Ռուսիոյ և Թուրքիոյ միջև
պատերազմ հրատարակուած է :

Լոնտրա 22 մայիս .

Թայմը լրագիրը կը ծանուցանէ թէ
Անգղիա յայտարարեւ է որ չեզոք աէ-
րութեանց առևտրական կամ պատերազ-
միկ նաւերուն Սուէշի ջրանցքէն անց-
նելուն դէմ որ և է արգելք դրուել չաի-
տի թոյլատրէ :

Միշաթ փաշան Լոնտրա եկաւ :

Բեքրապուրի 23 մայիս .

Պաշտօնապէս կը ծանուցուի թէ Ռու-
սիա որոշապէս իրաւ կուտայ Սերպիոյ ,
որ պատերազմին չմանակցի : Բայց տեղի
չկայ բռնադատական միջոցներ ձեռք առ-
նելու : Ռուսիա չուզեր յեղափոխական
համաշխարհային հետ համերաշխութիւն
ունենալ :

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երեքարթի օրը զինուորական
մեծ խորհուրդ մը գումարեցաւ ըն-
դարապետի դուռն ընդ նախագա-
հութեամբ պատերազմական գործող
նախարար Բէտիֆ փաշային , և ի
ներկայութեան համայն նախարարաց :

Բ. Դուռն որոշեց որ տէրութեան
նախարարներն ու բարձրաստիճան
պաշտօնատարք իրենց ձիերը կայ-
սերական բանակին նուիրեն :

Սոյն նուէրներն ընդունելու հա-
մար յատուկ յանձնաժողով մը կազ-
մուեցաւ Սպարապետի գլուխը :

Միտեղամայն Եպարքոսական հը-
րամանագրով Լիվա Լիվին փաշային
պաշտօն յանձնուեցաւ նախարարաց
և պաշտօնատարաց ակոռներն աչքէ
անցունել և թնդանօթ քաշելու յար-
մարութիւն ունեցող ձիերն առնուլ :

Սոյն հրամանագրին երեքշաբթի
օրն Սպարապետի գլուխը կարգաց-
ելով , ներկայ գտնուող նախարարք
իրենց կառքերուն ձիերը քակեցին
տուրին , և իրենք քաշելով իրենց
տուներ գնացին :

Կ. Պոլսոյ քաղաքապետութեան
պաշտօնատուներն որ յանձնաժողով մը
կազմուեցաւ մայրաքաղաքիս կալ-
ւածական տուրքերը շտառով հաւա-
քելու յարմար եղանակ մը գտնելու
համար :

Կըսուի թէ անվճար մնացած կալ-
ւածական տրոց գումարն 300000 լի-
րայի կը հասնի :

Բ. Դուռն հրատարակեալ պաշտօ-
նական ազդ մը կը ծանուցանէ թէ
տէրութեան բանտերուն մէջ գրա-
նուած և իրենց պատժոյ պայմանա-
ժամին երկու երրորդը լրացուցած
յանցաւորներուն արձակման և զին-
ւորագրութեան լուրը՝ զոր լրագիրք
ոմանք (ամենէն առաջ Պատիւրէթ)
տուած էին , անհիմն է :

Բերայի ակումբներուն մէջ զրոյց
կայ կըսէ մայրաքաղաքիս յոյն յեր-
թերէն մին թէ՛ Բ. Դուռը կայսերա-
կան պալատան գահաբեկէններուն
գործին վրայ երեւան ելած ինչ ինչ
յայտնութեանց պատճառաւ խրի-
թաքի էֆէնտիին անշարժ կայուած-
ները կնքոյ տակ դրեր է :

Սթանպոլ լրագրին մէջ կը կար-
դանք թէ չարաթ օրը Թաթաւլայի
Յունաց եկեղեցիներէն միոյն քահա-
նայն լատինարեղինաց պարտիզի մը
քովէն անցած ժամանակ հարսնա-
ժողիկ (կէլինճիկ չիչէյի) մը կը բըր-
ցընէ : Պարտիզայանները , որ Ալպա-
նիացի թուրքեր էին , զայս տեսնե-
լով՝ քահանային վրայ կը վազեն ու
կը ծեծեն : Քահանայն ազադակ բըր-
ցընելով , մտը գտնուող Յոյնք կը
լսեն և օգնութեան դիմելով պար-
տիզայաններուն վրայ կը յարձակին ,
և տակէց կախ ծագելով , երկու
կողմէ դանակներ ու ատրճանակներ
կը քաշուին և քանի մը հոգի կը վի-
րաւորին : Երբոր կռիւն այսպէս կը
շարունակէր , որուն Յոյն կոնայք ալ
քարերով մատնակից կըլլային , աստի-
կանութեան զինուորները վրայ կը
հասնին և խոստ կատաղիները կը
բռնեն բանալ կը տանին Հեռուեալ
օրը քննութիւն բացուելով , քահա-
նայն ծեծող և կռուին պատճառ ե-
ղողները կը բանտարկին :

Նոյն լրագիրը շարաթ տուր թը-
ւով ալ կը ծանուցանէր թէ Բէնտիկի
և Թուզլայի մէջ տեղի Ուլազմա մը
կենտրոյ , Համարձման տօնին օրն
յիշեալ գիւղերուն Յոյն բնակիչներէն
ու թ մարդիկ և քանի չափ ալ կա-
նայք և մանկունք ըստ սովորու-
թեան յիշեալ Սաղաման ուխտի կեր-
թան , և երբոր մոմ՝ վառելու վրայ
էին , երեսունի չափ իսլամներ բոք
և հրազնուք հոն կերթան , վառած
մոմերն և խեղճ գիւղացւոց հետեր-
նին տարած ուտելիքները ոտքեր-
նուն ներքեւ առնելով կը կոխտան :
Գիւղացիները բողբոջու համարձա-
կելով , թուրքերն անոնց վրայ կը
յարձակին , և նախ այրերն՝ և ապա
կանայքն ու մանկունքը կը ծեծեն ,
և ազոյ մը ծանրապէս կը վիրաւո-
րեն : Երբոր Յոյնք փախչիլ կ'սկսին ,
թուրքերն հրացան կը պարպեն ա-
նոնց ետեւէն և մանր կապարի հա-
տերէ երկու մանր տղայք կը վիրա-
ւորին : Վերջապէս երկու Յոյն երի-
տասարդ ալ կը բռնեն և թեւերին
կտալով կ'առնուն կը տանին :

Օսմանեան երեսփոխանական ժո-
ղովն երեքշաբթի առաւր նստին մէջ
Թաղապետական խորհրդոց վերա-
բերեալ օրինաց ծրագրին քննութիւ-
նը շարունակեց 39 դէ յօդուածէն
սկսեալ :

Կըրք յօդուածը՝ որ Թաղապե-
տական տրոց հաւաքման կը վերա-
բերի , տուրքը չվճարողները բան-
տարկելու արտօնութիւն առած ըլլա-
լով , Հայէպի երեսփոխան խորհրդին
Մանուկ Էֆէնտիին դաւաւոր ատենախո-
սութեամբ մ'երկարօրէն բացատ-
րեց արոց համար բանտարկութեան
անպատեհութիւններն , յետոյ թուր-
քիոյ բանտերուն դրութիւնն ու վի-
ճակը քննադատելով՝ պարտուց հա-
մար բանտարկեալներն ոճրագործաց
հետ միեւնոյն բանտի մէջ փակելու
դրութիւնը մեղադրեց :

Ծրագրին մինչև Կիրք յօդուածն
ընդունուելէ ետեւ , նախագահը դադ-
րեցուց ընթերցումն և ներկայացեալ
քանի մ'առաջարկութեանց քննու-
թեան հրաւիրեց ժողովը : Ետոյ նա-
խագահին հրաւիրմամբ քաղաքապետ
Բիւնիւր պէյ՝ ժողովին զ'անդակ նիս-

տերէն միոյն մէջ կատարուած քը-
ւէարկութեան մը վրայ տեղեկագիր
մը կարդաց :

Եիշեալ տեղեկագիրն՝ որ Բ. Դը-
րան պիտի հաղորդուի , յանուն ազ-
գին կը խնդրէ ամբաստանութեան
ենթարկել նախկին Մեծ—Էպարքոս
Մահմետ Նէտիմ փաշան , որ՝ ըստ
վկայութեան հասարակաց կարծեաց՝
իւր վեհապետին վստահութիւնը չա-
րաչար գործածեր , և ուրիշ ծանր
յանցանքներէ զտու Կ—Յ միլիոն զոյրի
գումար մ'ալ կաշառք կերեր է :

Ժողովը միաձայնութեամբ ըն-
դունեց տեղեկագրին խմբագրութիւն-
ներն և ատենան գոցուեցաւ :

Օսմ. Երեսփոխանական ժողովին
այս գործը մեծ գովեստից արժանի
է . որովհետեւ համարաւական սկզբ-
րան անաչառ գործադրութիւնն է ,
որոյ արդիւնքն ինչ որ ալ ըլլայ , ար-
գարութեան գործ մ'է . վասն զի
մութի մէջ գործուած գործերը՝ բա-
րի կամ չար՝ ի լոյս կենն , անմեղն
ու յանցաւորը կը յայտնուի , և եր-
կին ալ զինքը կառավարող անձանց
ընթացքն ու գործերը ճշգիւ գա-
տելու կարող կըլլայ :

Երեսփոխանական ժողովոյ այս ա-
ւուր նստին մէջ ալ երեսփոխանաց
ընտրութեան օրէնքը կրկին անգամ
կարգադրուելով , Մաքսուտեան վը-
սեմ՝ Սեպուհ Էֆէնտիին գիտողու-
թիւն ըրաւ թէ ժողովը ետեւ ընդհա-
նուր քուէարկութեամբ կատարուած
ընտրութիւնք՝ մեծագոյն մաս կազ-
մող ազգին կամ ցեղին ընտրելեացը
միայն նպատաւոր կըլլան , իսկ փոքրա-
մասնութիւն կազմող ազգերէն կամ
ցեղերէն բնաւ չկրնար երեսփոխան
ընտրուիլ : Բուժելի չատ գաւառաց և
կղզիներուն մէջ Յոյնք մեծամասնու-
թիւն կազմելով , այն կողմերէն ընտ-
րուելիք երեսփոխանք մեծ մասամբ
Յոյն կրնան ըլլալ : Իսկ Հայք՝ որ ընդ-
հանրապէս Յոյներէն բազմաթիւն ,
բայց անոնցմէ չատ աւելի ցրուեալ
ըլլալով , ամեն տեղ իսլամներէն փոք-
րաթիւ են , ընտրութեանց մէջ ոչ մէկ
անդ մը չեն կրնար մեծամասնութիւն
ունենալ և իրենց ազգէն երեսփո-
խան ընտրել : Այս բանը ծանր զըր-
կանք մ'է տէրութեան հայազգի ժո-
ղովրդոց , որ Օսմանեան ազգին մէկ
կարեւոր մասը կըկազմեն : Այս պատ-
ճառաւ առաջարկեց որ մեծամասնու-
թիւն չունեցող ժողովրդոց ալ երես-
փոխան տալու իրաւունքն ապահո-
վելու միջոց մը խորհուի ներկայ օրի-
նաց մէջ :

Սեպուհ Էֆէնտիին այս արդար
առաջարկութիւնն , որուն ձայնակից
եղան միւս Հայ երեսփոխանք և քա-
մ'ալ ուրիշ քրիստոնէայ երեսփո-
խանք , իսլամ և Յոյն երեսփոխանաց
մեծամասնութենէն մերժուեցաւ :

Սեպուհ Էֆէնտիի ազդուապէս բո-
ղոքելով պահանջեց որ իւր դիտո-
ղութիւնն ու բողոքն արձանագրուի
Տեսնելիք թէ ընտրական օրինաց
երրորդ ընթերցման ժամանակ այս
կարեւոր խնդրը նկատողութեան
պիտի առնուի թէ ոչ :

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ			
Է Ս Չ Ա Մ Ը Ո Ւ Մ Ո Ւ Մ Ի Է			
11 մայիս .	Զորքարթի իրիւն	9,	9
12 մայիս .	Հինգշաբթի առաւօտ		
	Բացուեցաւ	9,	8
	Ժամ 6 1/2 ին	9,	9
Բուժելի երկաթուղի	Ֆր.	23	
Թղթագրամ	Լիւր.	179	
ԸՆԹԱՅՔ ԱՐԺԵՐԴԹՈՑ			
Կ. Պոլիս 11 Մայիս			
Ստիւթի ժէնէրալի բաժ.	Անգլ. լիւր.	225	
» Ժոյնանականութեան		118	
Կ. Պոլսոյ Պաշտօնին		225	
Քրէտի ժէնէրալ		130	
Քրէտի Օսթրո-թուրք			

եղեկութեանց համար պէտք է ղիմել Մի-
լաթիոյ Բէրլէմպէ բազմորի մօտ Լլապանի
Երազբ գործակատար